ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 514-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____2024 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N 514-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ **ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի «**Բուսասանիտարական փորձաքննության նպատակով փորձանմուշվերցնելու կարգը սահմանելու մասին**» N 514-Ն «Որոշման» (այսուհետ՝ որոշում) հավելվածում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝

- Որոշման հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Սույն կարգով կարգավորվում են բուսասանիտարական զննման կամ բուսասանիտարական փորձաքննության նպատակով փորձանմուշ վերցնելու կարգը, ելանյութի կազմմանը, միջին նմուշի առանձնացմանը, նմուշառման ակտի և նմուշներն ուղեկցող նամակի կազմման և նմուշների պահպանմանը ներկայացվող պահանջները.»

- Որոշման հավելվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3) պահեստներում պահպանվող սերմնանյութի նմուշառման համար սերմնանյութի զբաղեցրած մակերեսը բաժանվում է մոտավորապես 20 քառ.մետր հատվածների և յուրաքանչյուր հատվածից վերցվում է 3 կետից: Եգիպտացորենի կողերից նմուշառումը կատարվում է նույն կարգով.»

- Որոշման հավելվածի 5-րդ և 9-րդ կետերի 1-5-րդ ենթակետերից հանել «՝ 3 շերտից» բառերը.
- Որոշման հավելվածի 11-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերից հանել « երկու շերտից,» բառերը.
- Որոշման հավելվածի 13-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերից հանել «, 2 շերտից» բառերը.
- Որոշման հավելվածի 14-րդ և 15-րդ կետերի 1-5-րդ ենթակետերից հանել «՝ 2 շերտից» բառերը.
- Որոշման հավելվածի VII գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«VII ՄԻՋԻՆ ՆՄՈՒՇԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ, ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԱԿՏԻ ԵՎ ՆՄՈՒՇՆԵՐՆ ՈՒՂԵԿՑՈՂ ՆԱՄԱԿԻ ԿԱԶՄՈՒՄԸ»

- Որոշման հավելվածի 21-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«21. Կետային նմուշները միացվում են (խառնվում են), և ստացում է միացյալ նմուշ, որը բաժանվում է միջին նմուշի (այսուհետ՝ նմուշ): Նմուշների առանձնացնելուց հետո յուրաքանչյուր նմուշին տրվում է ծածկագիր, որը փակցվում կամ կցվում է նմուշին: Բուսասանիտարական զննում անցկացնելու նպատակով բույսերից և բուսական արտադրանքից նմուշները վերցվում են սույն կարգի Ձև N 1-ում ներկայացված չափաքանակներով:»

- Որոշման հավելվածի 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

« 23. Միջին նմուշն առանձնացնելուց հետո՝ տեղում, նմուշառման վերաբերյալ լիազոր մարմնի տեսուչի կողմից, բեռի տիրոջ կամ նրա ներկայացուցչի և մաքսային ծառայողի ներկայությամբ կազմվում է նմուշառման ակտ՝ համաձայն սույն հավելվածի N 2 ձևի:

- Որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 23.1-ին և 23.2-րդ կետերով՝

«23.1 Նմուշները տրամադրվում են անհատույց, իսկ սահմանային վերահսկողության նպատակով իրականացվող փորձարկման (փորձաքննության) ծախսերը «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքով սահմանված կարգով կատարվում են բեռը տնօրինողի հաշվին:

23.2 Բեռը տնօրինողը լիազոր մարմնի կողմից տրամադրված նմուշները սույն կարգի N 3 ձևի համաձայն կազմված ուղեկցող նամակով ներկայացնում է համապատասխանության գնահատման մարմին՝ փորձարկման լաբորատորիա:»

- Որոշման հավելվածի «Ձև» բառը փոխարինել «Ձև N 1» բառերով.

- Որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ՁԼ N 2-ով և ՁԼ N 3-ով.

«

ՁԼ N 2

_____

(պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի անվանումը, գտնվելու վայրը)

Ն Մ ՈՒ Շ Ա Ռ Մ Ա Ն Ա Կ Տ N

_____

(ստորաբաժանման անվանումը)

_____ -ի կողմից

(անուն, ազգանուն)

Հ/Հ	Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների անվանումը	Նմուշի(ների) ծածկագիրը	Արտադրող երկիրը	Բե քա (հ

Բեռը տնօրինող կամ նրա լիազոր ներկայացուցիչ՝

_

_____

(բեռը տնօրինողի կամ նրա լիազոր ներկայացուցչի անուն, ազգանունը)

_____
___

(բնակության վայրը, անձնագրի սերիան և N,
լիազորագրի տվյալները)

_____

(իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը, գտնվելու վա

_____
___

(ավտոմեքենայի պետհամարանիշը, կապարակնիքի
համարը)

Այլ նշումներ՝_____
_____

Լիազոր մարմնի տեսուչ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանու

Մաքսային ծառայող _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանու

Բեռը տնօրինող կամ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանու
նրա լիազոր ներկայացուցիչ

____“ ” 20___ թ.

-

ՁԵՎ N 3

_____

(պետական վերահսկողություն իրականացնող պետական մարմնի անվանումը, գտնվելու վայրը)

ՆՄՈՒՇՆԵՐՆ ՈՒՂԵԿՑՈՂ ՆԱՄԱԿ

N.

_____20 թ.

_____ _____

(փորձարկման լաբորատորիայի անվանումը) (ղեկավարի անունը,ազգանունը)

Արտադրանքի փորձաքննության համար խնդրում եմ __ _____

_____ _____(փորձարկման լաբորատորիայի անվանումը, գրանցման համարը և թվականը)

_____ ում կատարել համապատասխան

_____ -ին ընտրված՝

ստորև նշված

(նմուշառման նորմատիվ փաստաթղթի նշագիրը)

Արտադրանքի նմուշների փորձարկումներ:

Արտադրանքի անվանումը	Արտադրանքի նմուշների քանակը	Չափի միավորը	Նմուշի ծածկագիրը	Ցուցանիշներ,ըստ որո փորձարկումներ և այլ սահմանող նորմատիվ նշանագիրը և համաա կետի համարը

Վճարումը երաշխավորում
եմ՝_____

(բեռը տնօրինողի կամ նրա լիազոր
ներկայացուցչի անունը, ազգանունը, ստորագրությունը)

Լիազոր մարմնի տեսուչ

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

»

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն.ՓԱՇԻՆՅԱՆ